ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2026թվականի N 001

ԱՐՏԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ Կառացարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Լոռի-1 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 27.09.2024թ. թիվ 28-Ա որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 2025թ. մարտի 13-ի թիվ 130-Ա

որոշումը, քանի որ 2010 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, խոհանոցի և պարիսպների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով Արտակ Բաղալյանի (ծնված 11.11.1965թ.) դիմումը, չափագրման համաձայնությունը և 2025S5TG6F մուտքագրման ծածկագրով տեղեկանքը

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0144-0001 և 06-113-0144-0002 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,09957 հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0144-0001 և 06-113-0144-0002 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,09957 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել, այն փոխադրելով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և համապատասխանեցնել Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:

3.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0144-0001 և 06-113-0144-0002 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,09957 հա հողամասում Արտակ Բաղալյանի կողմից ինքնակամ կառուցված 27.38 քմ մակերեսով բնակելի տունը, 17.89քմ. մակերեսով խոհանոցը և 3.84 քմ. ընդհանուր մակերեսով պարիսպները:

4.Ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի սեփականության իրավունքը Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0144-0001 և 06-113-0144-0002 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,09957 հա հողամասի և հողամասում գտնվող օրինականացված 27.38 քմ մակերեսով բնակելի տուն, 17.89քմ. մակերեսով խոհանոցի և 3.84 քմ. ընդհանուր մակերեսով պարիսպների նկատմամբ:

5.ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում 06-113-0144-0001 և 06-113-0144-0002 կադաստրային ծածկագրերից առանձնացված 0,09957 հա հողամասին և հողամասում գտնվող անշարժ գույքին տրամադրել Ֆիոլետովո, Ֆիոլետովո, Վանաձոր-Դիլիջան մայրուղի, 25-26կմ., 2/1 բնակելի տուն փոստային հասցեն:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

7.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ղեկավարի 12.06.2025թ. թիվ N 030 և 18.12.2025թ. թիվ N 054 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՉԻՀՅՈՎ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2026թվականի N 002

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-113-0157-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Անդրեյ Մորոզով Միխայիլովիչի (ծնված՝ 1974թ.) դիմումը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 16.04.1991թ. թիվ 03 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքում գտնվող 06-113-0157-0009 կադաստրային ծածկագրով 0,614059 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրենքի ուժով ճանաչել Անդրեյ Մորոզով Միխայիլովիչի (ծնված՝ 26.10.1974թ.) սեփականության սեփականության իրավունքը 06-113-0157-0009 կադաստրային ծածկագրով 0,614059 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՉԻՉՅՈՎ**